2024թ. առաջին եռամսյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1.«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ՊՈԱԿ) 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է բնապահպանական խախտման 2 դեպք (ապօրինի ծառահատում):

Հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

2. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի կողմից առաջին եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակցության էկոլոգիական հետազոտություններ:

Խեցգետնի պոպուլացիոն և կենսաբանական ցուցանիշների ուսումնասիրություններ է կատարվել փոքր Սևանի՝ Չկալովկա և մեծ Սևանի՝ Արտանիշ համայնքների ջրային տարածքներում: Ձեռք բերված փորձանյութերի մշակման արդյունքում ստացվել են պոպուլյացիայի չափատարիքային, սեռական կառուցվածքի և ֆիզիոլոգիական վիճակի մասին տվյալներ:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի սկզբին: Լճում (Նորաշենի ջրային տարածք) խեցգետնի բեռնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են փետրվարի երկրորդ տասնօրյակին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է 1.5^0C-2.0^0C սահմաններում:

Ուսումնասիրվող տարածքներում, որսաբաժնում արուների թվաքանակը գերակշռում է էգերի համեմատ: Արուների հարաբերակցությունը կազմում է մոտ՝ 2:1: Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին:

Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով, թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիները:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին չափը փոքր Սևանում՝ (Չկալովկա) 9.8սմ է, քաշը՝ 26.2 գրամ, մեծ Սևանում՝ (Արտանիշ) 9.7սմ, քաշը 26.1գրամ: Էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները փոքր Սևանում՝ 10.1սմ, քաշը 25.8գրամ, մեծ Սևանում՝ 10.3սմ, քաշը՝ 28.5գրամ:

Տարիքային խմբերը կազմել են 3-5 տարեկան խեցգետինները: Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետնի տարածվածության սահմանները:

Ուսումնասիրության արդյունքներից ելնելով կարելի է եզրակացնել, որ վերարտադրման և որսաչափերի ցուցանիշների համաձայն Սևանա լճում խեցգետնի պոպուլացիան գտնվում է բավարար վիճակում:

Սիգ- առաջին եռամսյակում ձկնաբանական ուսումնասիրություններ են իրականացվել Սևանա լճի՝ Շորժա, Նորատուս, Ծովազարդ համայնքների ջրային տարածքներում:

Լճում կատարված ձկնաբանական հետազոտությունների ընթացքում սիգի տարածական բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի

ափամերձ գոտու ամբողջ երկայնքով հունվար ամսին ձվադրած VII-II սեռահասունության փուլում գտվող վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված վտառները գտնվում են հիմնականում ափամերձ գոտում՝ 10-15 մետր խորություններում: Հունվար ամսին Շորժա համայնքի ջրային տարածքից որսվել և վերլուծության է ենթարկվել սիգի 29 առանձնյակ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ որսված ձկների 26,7% կազմել են 1^+ տարեկան, 53,3%-ը 2^+ տարեկան և 20%-ը 3^+ տարեկան: Հետազոտված ձկների միջին երկարությունը կազմել է 33,3 սմ, քաշը՝ 462,5 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1.16, K=1.07:

Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-5 փուլերում: Հետազոտված ձկների 40% –ը կազմել են արու, 60%-ը էգ առանձնյակները:

Փետրվար ամսին լճից որսվել է սիգի 58 առանձնյակ: Հետազոտված ձկների միջին երկարությունը կազմել է 30.4 սմ, քաշը՝ 366.2 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1.20, K=1.10: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3 փուլում: Հետազոտված ձկները եղել են՝ 1^+ տարեկան 53.3%, 2^+ տարեկան 46.7%, (մեծ Սևան, Ծափաթաղ):

Մեծ Սևանում որսված սիգ տեսակի ձկների (73 առանձնյակ) միջին երկարությունը եղել է 30.6 սմ, քաշը՝ 337.1 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1.21, K=1.12: Սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3 փուլում: Հետազոտված ձկները եղել են՝ 1^+ և 2^+ տարեկան (մեծ Սևան, Նորատուս):

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող առանձնյակների աղեստամոքսային տրակտում հանդիպել են թիոտանի խեցգետնակերպ, կողալողեր, փափկամարմիններ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը Սևանա լճում տատանվել է 1.5^0C-3.5^0C:

Ուսումնասիրությունները իրականացվել են 40x40մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերով: Տվյալների վիճակագրական վերլուծությունից պարզվել է, որ ձկները հանդիպել են 10մ-ից մինչև 35մ խորություններում, ինչը բնորոշ է սիգին տվյալ ժամանակահատվածում:

Արդյունագործական ձկնորսություն

Կառավարության 2024 թվականի փետրվարի 8-ի № 182-Ն որոշման համաձայն՝ Սևանա լճում արդյունագործական ձկնորսության նպատակով 9 կազմակերպություններ հայտ են ներկայացրել շրջակա միջավայրի նախարարություն 619 ձկնորսների միջոցով՝ 256 946.9 կգ սիգ տեսակի ձկան որս իրականացնելու համար, ներառյալ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը:

ՊՈԱԿ-ի կողմից մուտքի և ելքի 25 կետերին տրամադրվել են մեկանգամյա օգտագործման համարակալված կապիչներ ձկնորսական ցանցերին ամրացնելու համար (յուրաքանչյուր ցանցին 1 կապիչ):

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանգրերով 2024 թվականի **մարտի 01-ից մինչև ապրիլի 01-ը ընկած** ժամանակահատվածում 8 կազմակերպությունների կողմից Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 21 կետերից, որի ընթացքում որսվել է **16261**կգ սիգ տեսակի ձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմագրով ՊՈԱԿ-ի և ձկնորսների միջև կնքվել է 327 պայմանագրեր, 142794.4 կգ սիգի որս իրականացնելու համար: ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրերով նախատեսված

ամբողջ չափաքանակի համար վճարվել է բնօգտագործման վճար: 2024 թվականի **մարտի 01-ից մինչև ապրիլի 01-ը** ընկած ժամանակահատվածում 192 ձկնորսի կողմից որսվել է **7666** կգ սիգ տեսակի ձուկ:

Կադաստրի վարում և հողաշինարարություն. Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են 3 նոր պայմանագրեր, 1 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, 20 հողօգտագործողների պայմանագրեր դադարեցվել են (լուծվել են), 15 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝ ՇՄՆ-ի և ՊՈԱԿ-ի միջև 2024թ. հունվարի 18-ին կնքված ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներն իրականացնելու նպատակով կատարվել է նշահարում և հաշվեգնահատման աշխատանքներ Դրախտիկ տեղամասում:

Շրջակա միջավայրի նախարարության և «Էքսկոշին» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ 24/01» ծածկագրի գնման պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման նպատակով Այրիվանի տեղամասում կատարվել է նշահարում և հաշվեգնահատման աշխատանքներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի մի շարք հրամանների համաձայն հողաշինարարը մասնակցել է մի շարք գնահատման հայտերի հանրային քննարկումների:

Պատարաստվել են «Սևան» ազգային պարկի տարածքների հողամասերի մրցույթային փաթեթներ և ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1578-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի քննարկման և մրցույթի հայտարարման համար: Ս. թ. մարտ ամսին մրցույթ է հայտարարվել 14 հողակտորների համար:

Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Ի կատարումն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2024 թվականի մարտի 5-ի № Ն/16.11/2088 հանձնարարականի և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 19-ի №102-Ա հրամանով և «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ս. թ. փետրվարի 20-ի № 125-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ներկայացված հաշվետվությունը, շրջակա միջավայրի նախարարության և «Էքսկոշին» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ 24/01» ծածկագրի գնման պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ և ջրածածկի ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման նպատակով, քարտեզ-սխեմայի համապատասխան՝ Այրիվան տեղամասի 1-ին պահաբաժնի 7-րդ և 2-րդ պահաբաժնի 8, 9, 10, 11, 15, 16, 17-րդ քառակուսիներում կատարվել են նշահարման աշխատանքներ՝ ընդհանուր 41,37 հա–ից 17.1 հա մաքրման ենթակա տարածքում, կազմվել է նշված տարածքի քարտեզ-սխեման և հատատեղի անձնագիրը, համաձայնեցվել է համապատասխան փայտանյութի ծավալները ՇՄՆ-ի հետ և աշխատանքները սկսելու համար դուրս է գրվել №000001 անտառհատման տոմս:

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2024թ. հունվարի 18-ին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին №ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի՝ «Սևան» ազգային պարկի Դրախտիկ տեղամասում՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով իրականացվում են նշահարման և հաշվեգնահատման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում.

ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Գլոբալ տաքացում» թեմայով ուսուցողական սեմինար-քննարկում, «Լճի սառեցման կարևորությունը» ֆիլմի դիտում-քննարկում, «Հոդվածոտանիների դաս-խեցգետին» ուսուցողական դասընթաց, «Ջրի համաշխարհային օր, ջրի կենսական նշանակությունը» խաղ-վիկտորինա, «Սևանա լիճ» դիլմի դիտում:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն է այցելել 566 այցելու, որոնցից 212-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

3. Ընդհանուր բաժին.

ՊՈԱԿ է ստացվել 632 գրություն, որից 132-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 500-ը՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 925 գրություն, որից 89-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարում. Կազմվել է 71 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 1-ը աշխատանքային պայմանագիրը լուծելու, 2-ը խրախուսելու, 2-ը չվճարվող արձակուրդ տրամադրելու, 11-ը ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու, 31-ը աշխատողին գործուղելու, 26-ը այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 2 մարդ, աշխատանքից ազատվել է 1 մարդ:

Իրավաբան. Պայմանագրերով սահմանված վարձավճարներն ուշացնելու համար 17 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց ընդհանուր պարտքը 4517748 ՀՀ դրամ է, ներկայացվել են պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման առաջարկներ: Լուծման առաջարկների արդյունքում ՊՈԱԿ է մուտքագրվել 598272 դրամ վարձավճար:

ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում հրապարակվել են 22 ծանուցումներ, որից 20-ը՝ կադաստրային արժեքների փոփոխության, 2-ը՝ պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման վերաբերյալ:

Կազմվել են 119 ծանուցումներ, որից 54-ը՝ համայնքների հետ կնքված պայմանագրերում պայմանագրի կողմի փոփոխության, 60-ը՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 4-ը՝ հանրային լողափերի սպասարկման պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացման, 1-ը՝ մասնավորեցման արդյունքում պարկի տարածքում ձեռք բերված անշարժ գույքով ծանրաբեռնված հողամասի վարձավճար վճարելու վերաբերյալ:

Մշակվել և հաստատման է ներկայացվել ՊՈԱԿ-ի 2024 թվականի քաղաքացիական պաշտպանության պլանը:

ՀՀ Վճռաբեկ դատարան է ներկայացվել 1 վճռաբեկ բողոք Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշման դեմ:

Հարկադիր կատարման փուլում կնքվել և դատարանի հաստատմանն է ներկայացվել 1 հաշտության համաձայնություն:

Կազմվել են շուրջ 60 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

1) 3 հայցադիմում, ընդհանուր՝ 4595386 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջով:
2) 2 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու և վճռի օրինական ուժ ստանալու փաստը 2-րդ կնիքով հաստատելու մասին:
3) 3 դիմում վեճն ըստ էության սպառված լինելու վերաբերյալ:
4) 2 միջնորդություն, որից 1-ը՝ հայցի առարկայի, 1-ը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ:
5) 10 քաղաքացիական գործով ապացույց:

Դատարանի վճռով հօգուտ ՊՈԱԿ-ի բավարարվել են 6 հայցադիմումներ, ընդհանուր՝ 2699800 դրամի պահանջով, որից 4-ը նաև պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծման պահանջով:

ՊՈԱԿ-ի դեմ ներկայացված 2 քաղաքացիական գործերի վարույթները մերժվել են:

ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններում քննվում են 38 քաղաքացիական գործ, որից 19-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման, 1-ը՝ պայմանագրի լուծման, 18-ը՝ գումարի բռնագանձման պահանջներով, ընդհանուր՝ 39 076 592 հայցագնով:

Իրավաբանը մասնակցել է 10 քաղաքացիական գործերով դատական նիստերի:

4. Ֆինանսահաշվապահական բաժին.

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2024թ հունվարի 18-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անատառտնկարկների մաքրման ծառայությունների համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 42,813.5 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որն ամբողջությամբ ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձի վարձատրության համար:

Գանձումներ. Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 458 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև

կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 65 416.5 հազար ՀՀ դրամ:

Գնումներ. ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 8 ընթացակարգ, որից՝ 5-ը մեկ անձ, 3-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 5 պայմանագրեր:

5.Տնտեսական սպասարկման բաժին.

Ստորաբաժանումներին տրամադրվել է դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական ապրանքներ:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների ձյան մաքրման աշխատանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ համատեղ անցկացվել է ավտոմեքենաների ջրային տեխնիկայի գույքագրում և նրանց տեխնիկական վիճակի մանրազննին ուսումնասիրում, անցկացվել է ավտոմեքենաների տեխնիկական զննում և կնքվել է ԱՊՊԱ պայմանագրեր:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել է համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն _____**Կ. Մնացականյան**
/ստորագրություն/